# ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ՝

## ԱԴԱՄԱՆԴԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ

*Հայկական Մամուլին երիցագոյն ամսաթերթ Հանդէսը՝* ԲԱԶՄԱՎԷՊՆ *է, որ* 1843*ին՝ Հ. Գ. Այվազովսքիի խմբագրապետութեամբ հրատարակուիլ սկսած է։*

*Այդ թուականէն մինչև* 1901 *Հ. Ղ. Ալիշան՝ հազարաւոր հայրենաշունչ յօդուածներ զետեղած է Բազմավէպի թերթերուն մէջ։*

*Բագրատունիներ, Հիւրմիւզեաններ, Զարբհանալեաններ, Տէր–Սահակեաններ և ուրիշ Հայ հանճարներ և տաղանդաւորներ՝ իրենց մտքերուն լաւագոյն արտադրութիւնները համախմբած են* ԲԱԶՄԱՎԷՊԻ *մէջ, որ՝ բնաւ չէ դադրած Մխիթարեան Միաբանութեանս պաշտօնաթերթն ըլլալէ, թէև ամէն խմբագրապետ՝ իւր գիտութեան պաշարը և տեսութեանց ուղղութիւնը հոն դրոշմած ըլլայ։*

*Այժմ Բազմավէպ Հանդիսարանը իր* 75*երորդ տարեշրջանին՝ իր Ադամանդեայ Յոբելեանին մէջ թեւակոխելով, եթէ անյաղթելի խոչընդոտներու չի հանդիպի, անպայման ամսէ ամիս լոյս պիտի տեսնէ՝ երեք մեծադիր թերթերէ բաղկացեալ. և* 10*էն մինչև* 20 *շահեկան պատկերներով ճոխացեալ պիտի ըլլան իր* 50 *էջերը։*

*Խմբագրութիւնս վստահ՝ թէ ընթերցասէր և ազգասէր Հայորդիք պիտի փութան բաժանորդագրուիլ, ամէն ծախս և խնամք պիտի չի գլանայ՝ որպէս զի թերթերուն թուղթերը և բովանդակած գրութիւնները ու նկարները ընթերցողաց համակրելի հանդիսանան՝ Եւրոպական յառաջադէմ ազգերու պարբերականներուն հրապոյրը ցոլացնելով։*

*Այս նպատակին համար՝ Բազմավէպի գիտական բաժինը զարգացնելով, պիտի ջանանք, Առողջաբանական, Բժշկական, Բնաբանական, Տարրաբանական, Բնապատմական, և այլ գործնական գիտութեանց պատկանող յօդուածներու շարքեր պարբերաբար ի լոյս ընծայել՝ ժողովուրդէն դիւրաւ հասկցուելու ոճ մը գործածելով։*

*Համայնագիտական նիւթերէն մի միայն տակաւին պակաս պիտի տեսնուին՝ մեր ազգին մեծ և ահարկու ողբերգութեանց դրուագները, քանի որ շրջահայեցութիւնը և պատասխանատուական անհրաժեշտ հարկը՝ զմեզ կը բռնադատեն լռել։*

*Բազմավէպի բովանդակութեան բաժանմունքը և գլխաւոր աշխատակիցները առ ժամս հետևեալք են.*

Ա. — ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ. *Յօդուածագիրը* ԽՄԲ. *կամ Հ. Ն. Մխ. — Համալսարանական շրջանաւարտ — կամ Ուրիշներ։*

Բ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ. *Յօդուածագիրները, Հ. Յ. Վ. Թորոսեան — Հ. Բ. Վ. Սարգիսեան — Հ. Խ. Վ. Սիսանեան — Հ. Յ. Վ. Աւգերեան — Հ. Լ. Ալթճեան — Գ. Մ. — Բրօֆ. Կ. Բասմաջեան. — Բրօֆ. Հ. Աճառեան — Հրաչեայ — և այլք։*

Գ. — ԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ. *Հ. Խ. Վ. Սինանեան — Հ. Ն. Մխիթարեան — Հ. Հ. Ն. — Հ. Վ. Խամպէկեան — Հ. Ս. Ն. — և այլք։*

Դ. — ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ. *Հ. Յ. Վ. Տիրոյեան — Հ. Ն. Մխ. — Հ. Ա. Յովսէփեան — և այլք։*

Ե. — ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԲԱԺԻՆ. *Բրօֆ. Լ. Կիւրեղեան — Հ. Ս. Վ. Երեմեան — Հ. Ն. Մխ. — Պարթևիկ — Հրայր — և այլք։*

Զ. — ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ. *† Պ. Ողամեան (անտիպ գործերէն) — Ժիրայր — Հրայր — Արսէն Երկաթ — Հ. Ա. Յովսէփեան — Մենասէր։*



digitised by A.R.A.R.@

Է. — ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԲԱԺԻՆ. Հ. Ց. Տիրոյեան — Հ. Ս. Տէր-Մովսէսեան — Հ. Ն. Մխիթարեան — և այլք։
Ը. — ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ. Հ. Ներսէս Մխիթ. — Հրաչեայ — Հ. Ղ. Տ. — Հ. Գ. Ա. — Հ. Աղ. Տ. — և այլք։
Թ. — ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԲԱԺԻՆ. † Հ. Ղ. Ալիշան (անտիպ գործերէն). — Հ. Ք. Զ. — Թարգմանութիւններ — Հ. Ն. Մ. — և այլք։
Ժ. — ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ. Հ. Ն. Մխ. — Հ. Վ. Խամպէկեան — Հ. Հ. Ն. — Հրաչեայ — Համալսարանական ուսանողք — և այլք։
Կողքին վրայ զուարճալիք (գիտական) և ստացուած թերթերու և գրքերու ծանուցումներ։

Սոյն մեր ծրագիրը ի գլուխ տանելու համար՝ անհրաժեշտ է մեզ ունենալ համակրող բաժանորդներու բազմութիւն մը՝ որոնք ոչ միայն մեր թերթին պահպանումին պիտի նպաստեն, այլ նաև մենք անշահախնդիր ոգւով՝ երբ տեսնենք թէ Բազմավէպի խմբագրութիւնը իւր տարեկան ծախսին (5000 ֆրանք) 3,500 ֆրանքը ապահովցուցեր է, իւրաքանչիւր հարիւրեակ բաժանորդներու մէջէն՝ տասնական անձերու համար՝ անխտիր և անկողմնակալ վիճակահանութեան պիտի հանէ հետևեալ գեղեցիկ հատորները։

Թիւ 1էն մինչեւ Թ. 100 բաժանորդներու համար, սահմանեալ վիճակահանութեան հրատարակութիւններ.

| | | | ֆր. | ճր. |
|---|---|---|---|---|
| Ա. | ելլողին. | Բառգիրք Արուեստից և Գիտութեանց Հ. Մ. Քաջունի | 40 | — |
| Բ. | » | Հանրագիտարան Հայ կեանքի | 20 | — |
| Գ. | » | Գեղունի 1902 տարւոյն | 10 | — |
| Դ. | » | Գեղարուեստ. 1914ի | 6 | — |
| Ե. | » | Գեղունի 1910ի. | 6 | — |
| Զ. | » | Chateaubriand en Orient. (Հ. կար. Տէր-Սահակեան) | 6 | — |
| Է. | » | Flora Armena. (Հ. Ներսէս Մխ.) | 5 | — |
| Ը. | » | Քարտէս Արևելքի | 5 | — |
| Թ. | » | Քննական Պատմութիւն Հայոց. (Հ. Սահակ Տէր-Մովսէսեան). | 4 | 80 |
| Ժ. | » | Մխիթար՝ պատկերազարդ հրատարակութիւն | 4 | 60 |

Թիւ 101էն մինչեւ Թ. 200 բաժանորդներու համար.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | ելլողին. | Բնաշխարհիկ Բառարան | 30 | — |
| Բ. | » | Գեղարուեստ և Գեղեցիկը | 12 | 60 |
| Գ. | » | Ուսումն բնար. գիտութեանց (Հ. Ց. Տ.) և Flora Armena. | 10 | — |
| Դ. | » | Գեղեցիկը. (Հ. Սիմոն Երեմեան) | 6 | 50 |
| Ե. | » | Քարտէս Արևելքի | 5 | — |
| Զ. | » | Քննական Պատմութիւն Հայոց | 4 | 80 |
| Է. | » | Սիրտ. Թրգ. (Հ. Ալեքսիս Ցովսէփեան) | 4 | 80 |
| Ը. | » | Ընտիր Հայկազունք. (Հ. Յովհաննէս Վ. Թորոսեան) | 4 | — |
| Թ. | » | Լակներու ծագումը. (Հ. Ս. Սարգեան) | 3 | 30 |
| Ժ. | » | Տոնասիէն. Թրգ. (Հ. Անանիա Գոնտաքճեան) | 2 | 40 |



digitised by A.R.A.R.@

Թիւ 201էն մինչեւ Թ. 300 բաժանորդներու համար.

| | | | ֆր. | սր. |
|---|---|---|---|---|
| Ա. | ելլողին. | Գործնական Գիտութեան բառարան (Հ. Ս. Երեմեան) . . | 30 | — |
| Բ. | » | Գեղարուեստ և Գեղունի 1910ին . . . . . | 12 | — |
| Գ. | » | Նուագք 5 հատոր. (Հ. Ղ. Ալիշանի) . . . . | 10 | — |
| Դ. | » | Քարտէս Արևելքի . . . . . . . | 5 | — |
| Ե. | » | Ցուցանկարք Պատմութեան Հայոց . . . . . | 5 | — |
| Զ. | » | Մխիթարեան Ցոբելեան . . . . . . | 4 | 60 |
| Է. | » | Լակներու ծագումը և Պողաքանութիւն . . . . | 4 | — |
| Ը. | » | Փան Միքայէլ Վոլոտիովքի (2 հտր.) (Սիէնքիէվիչ) . . | 4 | — |
| Թ. | » | Պատկերներ . . . . . . . . | 3 | 50 |
| Ժ. | » | Առձեռն Ատլաս . . . . . . . . | 3 | 65 |

Թիւ 301էն մինչեւ Թ. 400 բաժանորդներու համար.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | ելլողին. | Քաղաքական Աշխարհագրութիւն (Հ. Ղ. Ալիշան) . . | 25 | — |
| Բ. | » | Հանրագիտարան Հայ կեանքի . . . . . | 20 | — |
| Գ. | » | Գեղունի 1902 . . . . . . . . | 10 | — |
| Դ. | » | Հայկ Դիւցազն . . . . . . . . | 8 | — |
| Ե. | » | Սրով ու Հրով (4 հատոր Սիէնքիէվիչ) . . . . | 6 | — |
| Զ. | » | Սիրտ . . . . . . . . . | 4 | — |
| Է. | » | Միլտոն. (աշխ. Թրգ. Հ. Ա. Ղազիկեան) . . . | 3 | — |
| Ը. | » | Ցաւիտենական զրոյց. (Վիկտորիա Աղանուր) . . . | 2 | 50 |
| Թ. | » | Տուրկին. (Հ. Սիմ. Երեմեան) . . . . . | 2 | 50 |
| Ժ. | » | Առձեռն Ատլաս . . . . . . . . | 3 | 65 |

Թիւ 401էն մինչեւ Թ. 500 բաժանորդներու համար.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | ելլողին. | Բնաշխարհիկ Բառարան (Ա–Ը) . . . . . | 15 | — |
| Բ. | » | Գեղունի 1910 և Գեղարուեստ . . . . . | 12 | — |
| Գ. | » | Հայապատում. (Հ. Ղ. Ալիշան 4 հատոր) . . . | 10 | — |
| Դ. | » | Ուսումն Բնական և Բնար. գիտութեանց և Flora Armena. | 10 | — |
| Ե. | » | Բառգիրք Գաղղիերէնէ–Հայերէն . . . . . | 6 | — |
| Զ. | » | Մխիթարեան Ցոբելեան . . . . . . | 4 | 60 |
| Է. | » | Կայլակներ և Տագնապը . . . . . . | 3 | 30 |
| Ը. | » | Հոմերոսի Իլիական (աշխ. Թրգ. Հ. Ա. Ղազիկեան) . . | 3 | 90 |
| Թ. | » | Առձեռն Ատլաս . . . . . . . . | 3 | 65 |
| Ժ. | » | Երգեր. Լէոպարտի . . . . . . . | 2 | 50 |

*Ծնր. Յաջորդ հարիւրեակ շարքին բաժանորդներու համար, պիտի կրկնուին վերջին ցուցակի գրքերը՝ ճշտութեամբ։*

*Մեր հասցէն՝*

RÉDACTION DE LA REVUE " POLHYSTORE „

*S.t Lazare* — *Venise*

*(Italie)*



digitised by A.R.A.R.@